

<https://doi.org/10.46991/hc.2025.si1.280>

The Photograph as a Source for the Armenian studies and a Factual Evidence of Documenting History

Yvette Tajarian

<https://orcid.org/0000-0001-9302-0104>

Arts Head of Matenadaran museum, YSU, associate professor, PhD

yvettetaj@yahoo.com

Keywords - Photograph, photo album, documentary photography, Armenian photography, Armenian studies, Western Armenia, historical monuments.

Since the invention of photography, specialist from various fields have collaborated with photographers to enhance the depth and clarity of their studies. Each photograph accompanying written texts serves a unique purpose in conveying information. Photographs capturing key moments in Armenian history since the 19th century provide invaluable pictorial evidence, now considered essential sources for Armenian studies and the documentation of historical events.

The examples presented in this article demonstrate that, today, photographs play a crucial role in supporting and enriching scientific research, serving as undeniable factual evidence.

Լուսանկարը որպես հայագիտության ուսումնասիրման աղբյուր և պատմության վավերագրման փաստացի վկայություն

Իվեթ Թաջարյան

Մատենադարանի Թանգարանի ղեկավար, ԵՊՀ, Արվեստագիտության թեկնածու, դոցենտ

Հիմնաբառեր - լուսանկար, լուսանկարչական ալբոմ, վավերագրական լուսանկար

History and Culture. Journal of Armenian Studies, special issue1, 2025, pp. 280-288.



This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Received: 19.11.2024

Revised: 03.12.2024

Accepted: 26.04.2025

© The Author(s) 2025

Լուսանկարը որպես հայագիտության ուսումնասիրման աղբյուր և պատմության վավերագրման փաստացի վկայություն չություն, հայկական լուսանկարչություն, հայագիտություն, Արևմտյան Հայաստան, պատմական հուշարձաններ:

Լուսանկարչության հայտնագործումից ի վեր տարբեր մասնագետներ իրենց ուսումնասիրությունները լիարժեք և ավելի ընկալելի դարձնելու համար սկսեցին համագործակցել լուսանկարիչների հետ: Գրավոր տեքստերին ուղեկցող յուրաքանչյուր լուսանկար իր առաքելությամբ բացառիկ է:

XIX դարից ի վեր Հայոց պատմության տարբեր իրադարձությունների հետքերը կարելի է տեսնել լուսանկարներում՝ որպես պատկերավոր ապացույց, մեր օրերում՝ որպես հայագիտության ուսումնասիրման աղբյուր և պատմության վավերագրման փաստացի վկայություն:

Հոդվածում ներկայացված տարաբնույթ օրինակները ապացուցում են, որ մեր օրերում գիտնականների հետազոտությունները ամբողջականացնելու տեսանկյունից լուսանկարները անհերքելի փաստեր են:

Фотография как источник арменоведческих исследований и фактологическое свидетельство документирования истории

Ивет Таджарян

Заведующая музеем Матенадарана, ЕГУ, доцент, кандидат искусствоведения

Ключевые слова - Фото, фотоальбом, документальная фотография, Армянская фотография, Арменоведение, Западная Армения, исторические памятники.

С момента изобретения фотографии различные специалисты начали сотрудничать с фотографами, чтобы сделать свои исследования более понятными и завершёнными. Каждое изображение, сопровождающее письменный текст, обладает уникальной ролью в исследовательском процессе. Следы различных событий в истории Армении, начиная с XIX века, можно увидеть на фотографиях как наглядное свидетельство, а сегодня они служат важным источником для изучения Арменоведения и фактическим доказательством документирования истории.

Примеры, приведённые в статье, подтверждают, что фотографии на сегодняшний день играют ключевую роль в завершении научных исследований и являются неоспоримыми фактами.

* * *

Մուտք: Արվեստի պատմության կարևոր ճյուղերից մեկը լուսանկարչությունն է: XIX դարասկզբում ի հայտ եկած այս նոր երևույթը մարդկությանը տրամադրեց փաստականության ցանկալի երաշխիքներ: Լուսանկարչության կարևոր գործառնություններից է տարբեր իրադարձությունների փաստագրումը, արձանագրումն ու հավերժացումը:

Լուսանկարչության հայտնագործման առաջին տարիներից սկսած այն լայնորեն տարածվեց աշխարհով մեկ, որից անմասն չմնաց Հայաստանը: Ցավոք, այսօր մենք չունենք հայկական լուսանկարչությունը ներկայացնող պետական որևէ կառույց: Իրականում դժվար է սահմանել, թե ո՞րն է «հայկական լուսանկարչությունը», քանի որ դրա առաջացման և զարգացման պատմության ուրվագիծը հիմնովին ուսումնասիրված չէ: Լուսանկարչությունը շարունակում է թերի ուսումնասիրված լինել հայ արվեստաբանության կողմից, այնինչ հայ լուսանկարիչների ունեցած ավանդը, լուսանկարչության կարևոր դերը ժամանակակից արվեստների շարքում պարտադիր են դարձնում թեմայի հանգամանակից ուսումնասիրումը: Լուսանկարը մեր օրերում հանդես է գալիս որպես փաստաթուղթ և հղում իրականությանը. լուսանկարը որպես մեր պատմության վավերագրման փաստացի վկայություն:

Թեման արդիական է, և այն մեծապես կօգնի հետազոտողներին իրենց մասնագիտական ուղղվածությանը նպաստող լուսանկարների կիրառման գործում: Թեմայի ուսումնասիրության հիմքում երկար տարիներ տարբեր հավաքածուների արխիվներում պահվող նյութերի վերլուծության, տեսակավորման և համեմատության մեթոդաբանությունն է:

Լուսանկարչության նվաճումները: Հայկական լուսանկարչությունը զարգացել է միջազգային լուսանկարչությանը համընթաց: Ունի աշխարհագրական և ժամանակային լայն ընդգրկում: Բազմաթիվ հայազգի լուսանկարիչներ, որ սփռված են եղել աշխարհի տարբեր անկյուններում, ստեղծագործել են իրենց բնագավառում՝ ձեռք բերելով բարձր հեղինակություն: Հայտնագործությունից կարճ ժամանակ անց լուսանկարչությունը, ներթափանցելով և ամուր արմատներ գցելով հայկական մշակույթում՝ դարձավ իրականությունը արձանագրող արվեստի մի ինքնատիպ ճյուղ՝ իր մասնակցությունն ունենալով և աջակցելով գիտական տարբեր ոլորտներում:

Հայ արվեստագետների ստեղծագործությունների մի մասն արժանավայել ձևով ներկայացվել է աշխարհի շատ թանգարաններում, մշակութային օջախներում և առհասարակ հանրությանը, սակայն դրանց մեծ մասը դեռևս ներկայացման կարիք ունեն:

Լուսանկարը որպես հայագիտության ուսումնասիրման աղբյուր և պատմության վավերագրման փաստացի վկայություն

Տեսողական պատմությունը ստեղծելը, ունենալը, այն պահպանելը կարևոր է, սակայն առավել քան կարևոր է այդ բոլորի դասակարգումը, տեսակավորումը, ուսումնասիրումը և, ի վերջո, հանրայնացումը: Առաջին հերթին այդ ամենը պատկերային պատմություն է այն մասին, թե ինչ է տեղի ունեցել, ինչպիսին է եղել այս կամ այն երևույթը, ինչպիսի միջավայրում, ինչպիսի հանգամանքներում է ձևավորվել, ինչպես է եղել այն մարդը, որն ապրել է քո երկրում:

Լուսանկարչությունը՝ հայագիտության ուսումնասիրման աղբյուր և փաստացի վկայություն: Հետազոտողները տարբեր ժամանակներում իրենց գիտական ուսումնասիրություններին կցում էին պատկերներ, որովհետև գիտակցում էին, որ տեսողությամբ ստացած տեղեկությունը մարդու համար ավելի մատչելի է, արագ տպավորություն թողնելու միջոց, համեմատաբար անջնջելի, քան խոսքով և գրով ստացածը: Ժամանակաշրջանից և տարածաշրջանից ելնելով՝ այդ պատկերները տարբեր են եղել: Հետազոտողները դիմում էին նկարիչներին իրենց գիտական նյութին համապատասխան նկար ունենալու առաջադրանքով:

Լուսանկարչության գյուտից ընդհամենը երեսուն տարի անց՝ 1870-90-ական թվականները սկսած, այն հասանելի էր դարձել որոշ լուսանկարիչներին: Դրանից հետո ճարտարապետները, հնագետներն ու պատմաբանները սկսեցին դիմել լուսանկարիչներին կամ ուղղակի պատվիրում էին լուսանկարներ լուսանկարիչ-հնագետներին, արվեստագետներին, ճանապարհորդներին¹: Այսպիսով, XIX դարի վերջին լուսանկարիչների աշխատանքները՝ որպես տեսողական հավաստում, հաճախ սկսեցին հայտնվել գրական տեքստերի կողքին: Տարածված երևույթ է, երբ որևէ բանի մասին կասկածը մեկ վայրկյանում դառնում է ապացույց, տվյալ երևույթին վերաբերող լուսանկարի ի հայտ գալուց անմիջապես հետո:

Լուսանկարիչները ընդգրկված են եղել նաև գիտական արշավախմբերում: Նրանք ճարտարապետների, հնագետների կամ պատմաբանների հանձնարարությամբ լուսագրումներ էին կատարում: Այդ թվականներին լուսանկարիչները ճամփորդելու համար ունեին նաև այլ խնդիրներ: Մասնագիտական սարքավորումների տեղափոխման հարցը առաջնային խնդիրներից մեկն էր: Խոշոր սարքավորումներով ճամփորդելը ոչ բոլորին էր հասանելի: Հայ լուսանկարիչները, ամբողջապես տեղյակ լինելով ճամփորդության դժվարությունների՝ հատկապես Արևմտյան Հայաստանում նախատեսված և չնախատեսված վտանգների մասին, առանց ընկրկելու,

¹ Ընդհանուր առմամբ, 1870-90-ական թվականներին ճանապարհորդելը բավականին բարդ էր: Հաճախ գիտնականները հրաժարվում էին ճանապարհորդել տրանսպորտային խնդիրների, ճամփորդական ուղեցույցների բացակայության և այլ մանրամասնությունների պատճառով: Լուսանկարիչները սովորաբար կարողանում էին առանց ուղեցույցի իրենց երկրի ներսում ճամփորդել, իսկ օտար երկրում անհրաժեշտություն էր տեղաբնիկի օգնությունը:

առաջադրանքները իրականացնում էին հատուկ նվիրումով: Լուսանկարիչները, անկախ նրանից՝ իրենցն էր նախաձեռնությունը, թե պատվիրատուինը, կատարում էին ազգանվեր աշխատանք: Նրանք գիտակցում էին, որ որոշ հուշարձաններ՝ հատկապես Արևմտյան Հայաստանում եղած հուշարձանները, փլուզման վտանգի առաջ էին (նկ. 1): Անգամ մեր օրերում պատմաբանները, հնագետներն ու ճարտարապետները լուսանկարների շնորհիվ հնարավորություն են ունենում կարծիք կազմել պատմական շինությունների՝ նախկինում ունեցած տեսքի մասին: Հուշարձանը լիարժեք պատկերացնելու նպատակով լուսանկարիչը յուրաքանչյուր հուշարձանից տրամադրում էր տարբեր դիտանկյուններից արված լուսանկարներ: Հայկական հուշարձաններն ուսումնասիրողներին սովորաբար օգնության են հասնում նման լուսանկարները, որոնք ապացուցում են ազգությամբ հայ լուսանկարիչների՝ Անթուան Սերուգինի, Հովհաննես Քյուրքչյանի, Մատթեոս Փափագեանցի, Արամ և Արամ Վրույրների, Կարապետ Հովհանջանյանի պես պատմա-ճարտարապետական լուսանկարչությանը կարևորություն տալու մասին¹: Երբեմն լուսանկարիչները իրենց լուսանկարների դարձերեսին նշել են, թե տվյալ հուշարձանը լուսանկարելու հանձնարարությունը որ գիտնականի կամ որ պատվիրատուի հանձնարարությամբ է կատարվել: Երբեմն նման բացատրությունները իրենց բովանդակային և տեղեկատվական բնույթով լրացնում են բազմաթիվ անպատասխան մնացած հարցեր: Անիի հուշարձանները ուսումնասիրող մասնագետների համար ոչ միայն կարևոր աղբյուր են համարվում 1870-ականների վերջին արված Քյուրքչյանի լուսանկարները, այլ նաև տեղանքի և այլ մանրամասնություններով հարուստ տեղեկատվական ճշգրտումները:

Հովհաննես Քյուրքչյանի աշակերտ՝ լուսանկարիչ Արամ Վրույրը, 1904 թ. Նիկողայոս Մառի ղեկավարած գիտական արշավախմբի ճանապարհորդությունների ընթացքում հավերժացրել է Անիի, Գառնիի և Վանի մի շարք հուշարձաններ, որոնց կից կան նաև տարաբնույթ նոթեր: Երբեմն այնպես է պատահում, որ որևէ լուսանկարի բովանդակություն ավելի հստակեցնում կամ ամբողջովին ժխտում է նախկինում արված մի վարկածն ու ուսումնասիրությունը: Այս առումով կարող ենք հիշատակել Գագիկ Ա Բագրատունի թագավորի տուֆակերտ արձանի և լուսանկարի մասին պատմությունը: Գագիկ Ա Բագրատունի թագավորի ձեռքին Գագկաշենի Սբ Գրիգոր տաճարի մանրակերտն է: Արամ Վրույրի հավերժացրած լուսանկարը հիմք դարձավ, որ վերջ դրվի գիտնականների միջև եղած երկարատև վեճին: Բանն այն է, որ Թորամանյանը ժամանակին հայտարարել էր Զվարթնոցի տաճարի վերականգնման մասին, ըստ որի, այն եղել է կլոր հատակագծով եռահարկ գմբեթավոր կառույց: Մինչ այդ լուսանկարը, ոչ ոք

¹ Հետաքրքրական է, որ այդ բնույթի լուսանկարներում այս լուսանկարիչները կառույցի մոտ կանգնեցնում էին որևէ մարդու կամ լուսանկարչական մի գործիք, որը հնարավորություն էր տալիս շինության համաչափության ճիշտ ընկալման համար:

The Photograph as a Source for the Armenian studies and a Factual Evidence of Documenting History

Լուսանկարը որպես հայագիտության ուսումնասիրման աղբյուր և պատմության վավերագրման փաստացի վկայություն նման շինություն չէր տեսել, իսկ այն ժամանակների համար Թորամանյանի վարկածը բավական արտառոց հայտարարություն էր [Քոչար, 2007, 338-348]: Այս լուսանկարն ապացուցեց, որ Թորամանյանին հաջողվել էր Զվարթնոցի տաճարի հատակագծի ուսումնասիրությամբ ճշգրտորեն վերարտադրել շինության ծավալատարածական կառուցվածքը, քանի որ, համաձայն պատմական աղբյուրների, Գագկաշենը լինելու էր Զվարթնոց տաճարի կրկնությունը: Նշենք, որ գիտական ուսումնասիրությունները ճշգրտող նմանօրինակ լուսանկարներն անթիվ են [Թաջարյան, Լուսանկարների..., 2023, 42]: Գիտնականները լուսանկարիչների համագործակցությամբ արված աշխատանքները հաճախ տպագրում էին համատեղ ալբոմներով: Մատենադարանում պահվում են այնպիսի ալբոմներ, որի մի էջում գիտնականի գրառումները, զծագրերը, նշումներն ու ճշգրտումներն են, իսկ դրանց կից կան լուսանկարներ: Այդպիսին է ազգագրագետ, բանահավաք, հնագետ Երվանդ Լալայեանի աշխատասիրությամբ լույս տեսած երկու ծավալուն ալբոմները, որոնց լուսանկարների հեղինակը Մ. Երմակովն է [ՄՄ Հ^ր 358, 359 ալբոմ]: Ալբոմներից մեկը նվիրված է Գեղարքունիքին, մյուսը՝ Սյունիքին (նկ. 2), որոնց մեջ կան պատմական հուշարձանների, խաչքարերի, բնապատկերների և ազգագրական նշանակություն ունեցող (կենցաղավարման դրվագներ, ծիսական արարողակարգեր, տարածաշրջանին բնորոշ արհեստներ, սովորույթներ ևն) արժեքավոր լուսանկարներ [Թաջարյան, Լուսանկարների... 2023, 47]:

Կան հայկական հուշարձանների եզակի լուսանկարներ, որոնցում եղած շինությունը այլևս գոյություն չունի: Մեզ հասած գրավոր ժառանգության և ժամանակ առ ժամանակ արխիվներն ուսումնասիրելու արդյունքում ի հայտ են գալիս նոր նյութեր, որոնցով լրացվում է բացը: Մաշտոցի անվան Մատենադարանի գրադարանի ալբոմների հավաքածուի մեջ պահվում է 22 լուսանկար ներկայացնող մի ալբոմ, որոնց հեղինակը Կարապետ Հովհաննջանյանն է: 1904 թ. լուսանկարիչը ալբոմը նվիրում է Էջմիածնի վարդապետ Տեր-Մովսիսյանին [ՄՄ Հ^ր 423 ալբոմ]: Այս ալբոմի լուսանկարներից մեկում Բագարանի կիսավեր Սբ Գևորգ եկեղեցին է: Այս լուսանկարը եզակի է, քանի որ ոչ միայն կառուցն է ավերվել, այլ նաև եկեղեցին ներկայացնող որևէ այլ լուսանկար չի պահպանվել [Թաջարյան, Անիի..., 2023, 132]:

Լուսանկարիչների հետաքրքրության շրջանակներում եղել են ոչ միայն ճարտարապետական կոթողները՝ այս դեպքում վանքերն ու եկեղեցիները, այլ նաև այնտեղ եղած ծիսական առարկաները, եկեղեցական սպասքը, ասեղնագործ վարագույրներն ու նմանօրինակ այլ նյութեր: Վերջին տարիներին ի հայտ են եկել Մաշտոցյան Մատենադարանի հավաքածուներում եղած և գիտական շրջանառությունից

դուրս մնացած այդպիսի լուսանկարներ¹: Լուսանկարների թվում եղել են նաև հարյուրավոր ապակե նեգատիվներ: Դրանց թվայնացումից հետո պարզ դարձավ, որ նեգատիվների բովանդակության ճնշող մեծամասնությունը ներկայացնում է Վաղարշապատը՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տաճար (ներքին և արտաքին հարդարանք) և հարակից շրջակայք, թանգարանային հավաքածու (ծխական առարկաներ, հոգևորականների հանդերձանք, գեղանկարներ, սրբանկարներ, ազգագրական նյութեր): Այս նկարներն արվել են 1880-1910-ական թվականներին: Այս հարուստ նյութերը վերջին շրջանում մեծ հետաքրքրություն են առաջացրել տարբեր մասնագետների մոտ: Անտիպ լուսանկարների շարքում կան նաև ազգագրական նյութեր (նկ. 3): Դրանց հետազոտման արդյունքում պարզ է դարձել, որ լուսանկարներն արվել են Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տաճարի շրջակայքում:

XX դարասկզբին Արևմտյան Հայաստանից տարհանված հայերը, հասնելով Սուրբ Էջմիածին, հայտնվեցին արվեստագետների ուշադրության կենտրոնում: Մեր կարծիքով դա պատահականություն չէ: Հայաստանի աշխարհագրական դիրքով, քաղաքական իրավիճակով պայմանավորված, ինչպես նաև աշխարհում կենցաղին ու նորաձևությանը նախապատվություն տալով՝ հայ արվեստագետները (լինեն դրանք նկարիչներ կամ լուսանկարիչներ) լծված էին օր առաջ վավերագրելու և այդ կերպ հավերժացնելու հայ մարդու կերպարը: Տեսնելով, որ գաղթի պատճառով ազգային տարազը, զարդերը կորստի ու մոռացության շեմին է, Վարդգես Սուրենյանցի և Արշակ Ֆեթվաճյանի պես նկարիչները վրձնեցին նրանցից շատերին: Մատենադարանում պահվող ապակե նեգատիվներում հավերժացած պատկերների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ վերջիններս սերտ ընդհանրություն ունեն Էջմիածնում հայ գաղթականներին վրձնած նկարիչների գեղանկարների հետ: Նմանօրինակ յուրաքանչյուր աշխատանք հայ ժողովրդի պատմական որևէ իրադարձության վկայությունն է:

Միանշանակ է, որ հայոց պատմության մեջ առանձնահատուկ դերակատարություն ունեն նաև հայկական գաղթօջախները: Աշխարհասփյուռ հայության ստեղծած ժառանգության (հոգևոր և աշխարհիկ շինություններ, մոնումենտալ հուշարձաններ և այլն) ուսումնասիրման համար լուսանկարը դառնում է տեղեկատվության փոխանցման կամուրջ համայնքում կատարվող ամենատարբեր իրադարձությունների մասին: Լուսանկարների և դրանց դարձերեսներին եղած մակագրություններն օգնում են վեր

¹ Մատենադարանի լուսանկարների գերակշռող մասը պահվում է տվյալ հաստատության գրադարանում և արխիվում: Ալբոմները մեզ հասել են տարբեր ճանապարհներով՝ կա՛մ տեղափոխվել են Մատենադարան ձեռագրերի, հնատիպ գրքերի և արխիվային փաստաթղթերի հետ միասին, կա՛մ՝ առանձին նվիրատվության արդյունքում: Լուսանկարները Մատենադարանին են փոխանցվել տարբեր գրադարանների (ինչպես Էջմիածինը, Մոսկվայի Լազարյան ինստիտուտը) պահոցներից, այնպես էլ անհատ նվիրատուների կողմից:

Լուսանկարը որպես հայագիտության ուսումնասիրման աղբյուր և պատմության վավերագրման փաստացի վկայություն հանել անհատներին, բացահայտել ընտանիքների անցած ճանապարհն ու պատմությունը [Թաջարյան, Գասպարյան, 2024, 168-173]:

Եզրակացություններ: Այսպիսով, լուսանկարը ցանկացած գրավոր փաստաթղթի պես հանդիսանում է սկզբնաղբյուր և պատկերավոր ապացույց բազմաթիվ հետազոտողների՝ անգամ նկարիչների համար: Լուսանկարի արժեքը բացառիկ է, որի մասին են փաստում վերոբերյալ օրինակները: Դրանք փաստացի վկայություններ են, որոնք որպես մասնագիտական օժանդակ նյութ կարող են ծառայել պատմաբանների, արվեստաբանների, մշակութաբանների, ազգագրագետների, ճարտարապետների, հայկական գաղթօջախները հետազոտողների և ընդհանրապես հայագիտության մյուս ոլորտներով զբաղվող մասնագետների համար:



Նկար 1. Բագարանի կիսավեր Ս. Գևորգ եկեղեցին: Լուսանկարիչ՝ Կ. Հովհաննջանյան: ՄՄ գրադարան, ՀՊ 423 ալբոմ, նկ. 23ա:



Նկար 2. Սելիմի քարավանատան գլխավոր մուտքը: Լուսանկարիչ՝ Կ. Հովհաննջանյան: ՄՄ գրադարան, ՀՊ 359 ալբոմ, աշխատասիրությամբ՝ Ե. Լալայեանի և Մ. Երմակովի:



Նկար 3. Տարագով կինն ու երեխան: ՄՄ Ձեռագրատուն: Թվայնացված է ազգագրական բնույթի լուսանկարներ ներկայացնող ապակե նեգատիվներից:

Գրականության ցանկ

T'ajaryan 2023 - Anii hushardzannern yst Karapet Hovhanjanyani lusankarneri (Matenadarani gradarani lusankarch'akan zhoghovatsuneri havak'atsu, Hmr 423 zhoghovatsu), «EJMIATSIN» kronagitakan yev hayagitakan amsagir, 2023, ej 121-135: **(in Armenian)**

T'ajaryan 2023 - T'ajaryan I., Lusankarneri yntrani Mashtots'i anvan Matenadarani havak'atsunerits', Yerevan, Zangak hratarakch'ut'yun, 2023, 184 ej: **(in Armenian)**

T'ajaryan, Gasparyan 2024 - T'ehrani «Artak Manukyan» t'angaranum pahvogh Ant'uan Sevrugini lusankarnery, Gegharvesti akademiayi Taregirk' 16, 2024/1, Yerevan, 162-181: **(in Armenian)**

K'voch'ar 2007 - K'voch'ar V., Hay lusankarich'ner, heghinakayin hratarakut'yun, Yerevan, 2007, 448 ej. **(in Armenian)**

Mashtots'yan Matenadaran (MM), gradaran, Hmr 358 albom, 110 lusankar, «Geghark'unik'» albom, ashkhata sirut'yamb, Ye. Lalayeani yev M. Yermakovi. **(in Armenian)**

Mashtots'yan Matenadaran (MM), gradaran, Hmr 359 albom, 110 lusankar, «Vayots' dzor» albom, ashkhata sirut'yamb, Ye. Lalayeani yev M. Yermakovi. **(in Armenian)**

Mashtots'yan Matenadaran (MM), gradaran, Hmr 423 albom, 22 lusankar, lusankarich', Karapet Hovhanjanyan. **(in Armenian)**